



2014թ. օգոստոսի 7-ին «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ գրասենյակում տեղի ունեցավ «ՏԻՄ օրենսդրություն և մասնակցային կառավարում» թեմայով դասընթաց, որին մասնակցեցին Լոռու մարզի՝ Աբրի, Ճոճկան և Ախթալա համայնքների երիտասարդները: Դասընթացի նպատակն էր մասնակիցներին իրազեկել տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքներին, համայնքի բնակիչների մասնակցության մեխանիզմներին, որոնք ամրագրված են ՀՀ ՏԻՄ օրենքում:

Դասընթացը վարում էր ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ ՀԿ-ի խորհրդի նախագահ՝ Լևոն Բարսեղյանը, որը մատչելի և մանրամասնորեն ներկայացրեց դասընթացի թեման:

Դասընթացի ավարտին բոլոր մասնակիցներին հանձնվեցին մասնակցության վկայագրեր:

Դասընթացը կազմակերպվել էր «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ի կողմից իրականացվող «Համայնքային բյուջեի մոնիթորինգ» ծրագրի շրջանակներում «Վորլդ Վիժն Հայաստան»-ի ֆինանսական օժանդակությամբ: